

ԿԸ.

Էջ 352. տող 13. «Այր ոք այր ոք՝ դեռ անդէն ի մարմի իւրում ընդ վայրենի դևս մարտ եղեալ յաղթէ:»

Ուզգ. Այր ոք այր, որ դեռ անդէն ան..:

ԿԲ.

Էջ 353. տող 1. « Յարեխօս կոչեցեալ է վասն միսիթարութեան բարեխօսութեան և օգնականութեան տկարութեանս մերոյ»:

Ուզգ. վասն միսիթարութեան որով բարեխօսէ և ի թիկունս օգնականութեան հասանէ:

Լ.

Էջ 354. տող 17. « Եւ լայնեա՛ դու զմիտ քո ի պաղեստինացւոց աշխարհէ աստի ի հոռոմոց թագաւորութիւն. և անտի տե՛ս զպարսից աշխարհն, զհնդկաց աշխարհն, զզթաց, գտորամտաց զաղղիաց, սպանիաց, մաւրոսաց, միքացւոց, եթեռվացւոց, և զայլոց »:

Ուզգ. զՄարդումատաց կամ զԱրմատաց, Գաղղիոյ, Սպանիոյ. իսկ ի յոդնականն ցոյց:

ՀԱ.

Էջ 358. տող 4. « Զի այժմ փոքր ի շատէ են շնորհըն, այլ յայնժամ առաւտութեամբ բաշխիլն պարզէն: Բայց առակէր, որ լինելոց էր յաւուր Պենտեկոստէից առ մեօք »:

Ուզգ. բայց առակէր, (այսինքն նշանակէր). կամի Ա. Հայրա ասել թէ ի հնումն ևս առատապէս բաշխուեցան պարզէք Հոգւոյն, բայց այն ամենայն նմանութիւն մ'էր. ակնարկութիւն՝ ինչ որ Պենտեկոստէից օքը Հոգին Սուրբ զպալի օրինակով պիտի հեղուր հաւատացելոց վրայ իւր շնորհը:

ՀԲ.

Էջ 362. տող 17. « Ասա դու ինձ զերազն զոր տեսի. և տեսի, և ոչ զիտեմ»:

Ուզգ. ես տեսի և ոչ զիտեմ: « Ճեսանես զգորութիւն Հոգւոյն սրբոյ, որ տեսինն չզիտեն և որ ոչն տեսին և զիտեն և թարգմանեն»:

ՀԳ.

Էջ 365. տող 6. « Յայնժամ վասն լսելեաց ամիսոփութեան զյօժարութիւն կարեցաց. զի անյագ իմն է վասն Հոգւոյն սրբոյ ճառք պատզամաց. բայց այժմ ի կողմն մի որ ինչ պիտոյ է, դարձեալ միւսանգամ առցուը. զդողեալ մերոյ տկարութեան ի բազմութենէ զրոցն ճառից, զայս այժմիկ մտադիրութեամբ խոստովանիմք»:

Ուզգ. ի բազմութենէ զրոցն ճառից: Հոգւոյն Սրբոյ մասին ճառելը, Ա. զրքի վկայութեան շատութեան համար, միայն մէկ կողմանէ նկատեր է բանը, հիմայուրիշ տեսակէտով պիտի ճառէ: Տիս էջ 380 տող 13. իսկ արդ թերմս... ի շենած բանիդ:

(Եարութակիլի)

Հ. ԳԱՐ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ



ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՄԱՇՏՈՑԻ ՄԻՀԶ

(Հար. տիս 1922 թզմ. էջ 17)

Վարդագեղ « Վարդի պէս գեղեցիկ ». Բազմերանգ, ազգի ազգի գունովը, ծառովը և ծաղկամբը, բռւսովը և անկովը, վարդազեղ, կարմրափայլ զարդարես. Ա. մաշտ. 24 ա:

Վերալասիլ « Վերը զասուիլ, վերը դասաւորուիլ ». Շնորհեա նմա ընդ երջանիկ հայրապետացն վերադասիլ. Ա. մաշտ. 363 բ:

Վերածներորդին «վերածնութիւն», կանոն Աւազան օրհնելոյ՝ որ ունի զգարգ փրկութեան և յաստուածային շնորհաւ վերածներութիւն. Մ. մաշտ. 189 բ:

Վերակրնել «նորէն կրկնել». կրկնեացն և վերակրկնեացն ըստ առաջնոյն ամրողջապէս. Մ. մաշտ. 157 բ:

Վերապատուիլ «փառաւորուիլ, մեծարուիլ». Ծնորհնեաւ սմայ յարդար դատաւորութեան քում ընդ Պետրոսեան աթոռակցութեանցն վերապատուիլ. Մ. մաշտ. 369 բ:

Վիժման «վիժուած սադմը, ավորան» . Երանի թէ իրրե զվիժանն էի, որ աննկար կորհաւ և ոչ ետես զլոյս. Մ. մաշտ. 1714, էջ 391.

Վիժմակիր տես Քարակիր. Եւ Թողեալ զայն ի զիրկս վիժմակրին, զայ անտի առ քարն. Մ. մաշտ. 159 ա:

Վճռահատել «վճռել, վճիռ կտրել». Եւ յաւարտ ընտրութեանն՝ մինչեւ վճռահատեացն և զեզես տեղույն նշանակեացն. Մ. մաշտ. 155 ա:

Ճարեմուտ «տարելից». Կանոն մեծի եօթն աւուր կամ քառամօրեայ և կամ տարեմուտ կատարելոյ. Մաշտ. 585. (Քառարանները կը նշանակին միայն «կազանդ, ամանոր, նոր տարի» նշանակութեամբ):

Ճնառնափայլ «աստուածային փայլով». Եւ հանոյական մաղթանօք՝ ընդ եղբայի արժանաւորիլ աստուածային և տեառնափայլ երևմանն. Մ. մաշտ. 274 բ:

Ճնօրհնելք «Ծնունդին և Զատկին տուն օրհնելու արարողութիւնը». Ճնօրհնէք ի սուրբ Ծննդեան. Մաշտ. 836: Ճնօրհնէք ի սուրբ Զատկի. Մաշտ. 847:

Ճպայինափայլ «տպագիռն քարին պէս փայլուն». Զյականց շափիւղայս տպագիռնափայլս. Մ. մաշտ. 24 ա:

Յրտածնե «յուրտէն ծեծուած, յրտահար». Եւ փոխանակ յրտածեծ և բրկանաց լինելոյ. Մ. մաշտ. 1714, էջ 624:

Փարատել «սրեկ, մարբեկ». Կանոն փարատելոյ զտուն նորածին մանկանց. Մաշտ. 321: (Այս նոր առութեար կը զտուիին նաև գաւառականներոն մէջ, հիմու, վն. «թոնիրին մէջը լաթով մը սրեկ՝ մարբեկ», Ենի. ծնունդէն յետոյ տպացկանին տունը օրհնել»):

Փոյխմանիլ «զղալ», Յաղթահարեալ ի բնութենչն՝ անկանի ի մեղս և սիալեալ փոշիմանի. Մ. մաշտ. 252 ա. Մի գուցէ սիալեալ իցէ և փոշեամանեալ, (ե-ով). Մ. մաշտ. 341 բ:

Փորուրար «ժամարարին փորին կապելու տեսակ մը զարդարուն զօտի¹». Եւ զկնի առնու զփորուրար մի ժամարարի կարմիր և արկցէ ի վերայ շապկին ուղղակի. Մ. մաշտ. 190 բ:

Քարակիր (որ և վի բակիր) «եկեղեցւոյ հիմարկութեան ժամանակ օծելի հիմարարելը կրող անձը». Եւ տայ զիրացանչիրսն ի զիրկս ի ժառանգաւորացն եկեղեցւոյ՝ ըստ պատույն պատշաճի՝ քարակիր պատրաստեցելոցն յինքնէ. Մ. մաշտ. 158 ա. Նոյնը նաև էջ 159, 164:

Քիզահանոյ «քեզի հաճելիյ». Լինելինքն իրրե զմի ի քեզահանոյ և ի բարեվաստակ արանց. Մաշտ. 698:

Քնուտ «ցնկոտ, շատ ցնացող». Զի թէ տզէտ է կամ թերեհաւատ, կամ ծոյլ է և ընոտ, կամ ազան է և արծաթասէր. Մ. մաշտ. 342 բ:

Քոյինատունկ «քու տնկած». Ի քոյինատունկ զուարթասաղարթ զրախտին փափկութեան եղեալ. Մ. մաշտ. 28 բ:

Քրիստոնէածին «քրիստոնեաներ ծնուցանող». Աւազանն սուրբ՝ իրրե որովայն քրիստոնէածին համարեալ է նմա. Մ. մաշտ. 189 բ:

Հ. ԱծԱՌԵԱՆ

1. Ճեշտ էլ այս. փորուրար կը կունեն և է այն՝ զոր ժամարար կը զգնու մզէն վար. ինչպէս բերուած օրինակն ալ կ'ըսէ: